ՄԵԾԱՀԱՐԳ ՏԻԱՐ ԽՈՍՐՈՎ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ՎԱՐՉԱՊԵՏ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Կառավարական պալատ—Երևան

Հայ Առաքելական Եկեղեցու և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի անունից շնորհավորում ենք Ձեր նոր բարձր պաշտոնը, որով ստանձնում եք հույժ պատասխանատու պարտականությունները մեր Հանրապետության վարչապետի:

Մաղթում ենք Ձեզ ի Տեառնե անսպառ եռանդ և լավատեսության ոգի՝ հաղթահարելու Ձեր առջև ծառացած բոլոր դժվարությունները և իրականաց նելու Ձեր բոլոր հայրենաշեն ծրագրերը:

Մենք ու մեր Ազգային Եկեղեցին ի Հայաստան և ի Սփյուռս աշխարհի կմնանք աղոթող Ձեզ համար և միշտ պատրաստ մեզ բաժին ընկած պարտականությունները ի կատար ածել Ձեզ հետ գործակցաբար:

Խորին հարգանք և օրհնությամբ՝

ՎԱԶԳԵՆ Ա.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
31 հուլիսի 1992 թ.